ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 24/1035 «03» 05 2016 թ.

Ձեր

2/2187-16
04.05.16թ.

Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպան
պարոն Ա.ԹԱԹՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թաթոյան

Ձեր կարծիքին է ուղարկվում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Առդիր՝ «4» թերթ:

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ *Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ*

Իրավաբանական վարչություն
կատարող Ս.Աբրահամյան
հեռ՝ 59-60-91

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՑ ԹԻՎ Ա-133
«04» 05 2016թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-223-Ն օրենքի՝

1) 26-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ պարբերությամբ.

«Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմամբ հեռախոսահամարի հիման վրա բաժանորդի անհատական տվյալները, ինչպես նաև բաժանորդի անհատական տվյալների հիման վրա հեռախոսահամարը պարզելը հեռախոսային խոսակցությունների վերահսկում չի հանդիսանում, և օպերատորները պարտավոր են պահանջվող տեղեկությունները տրամադրել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին:».

2) 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները քրեական վարույթն իրականացնող մարմիններին ներկայացնելու կարգը սահմանվում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համատեղ հրամանով:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ օրենքներ ընդունելու անհրաժեշտություն չկա:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի թիվ 131-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 104-րդ կետից և պայմանավորված է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համար հանցագործությունների արագ բացահայտման նպատակով հանցագործություն նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց (օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող անձանց) հեռախոսահամարները կամ օպերատիվ հաշվառման գործերով պարզված հեռախոսահամարների բաժանորդների տվյալներն արտադատական կարգով՝ օրենքի հիման վրա պարզելու և ձեռք բերելու հնարավորություն նախատեսելու անհրաժեշտությամբ

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկումը կարող է անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ Նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկումը ***հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ իրականացվող խոսակցությունների***, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և էլեկտրոնային հաղորդումների ***գաղտնի վերահսկումն է,*** որը ներառում է նաև հեռախոսահամարի պարզումը, հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը, ամրագրելը և այլն.

Բաժանորդի տվյալները չեն կազմում էլեկտրոնային հաղորդակցության համակարգի մաս և ձևավորվում են օպերատորի կողմից հեռահաղորդակցության համակարգի շահագործումից անկախ՝ ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա. Սակայն ներկայումս ձևավորվել է այնպիսի իրավակիրառական պրակտիկա, ըստ որի օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների արտադատական հարցումներով պահանջվող տեղեկատվությունը (բաժանորդի տվյալները, հեռախոսահամարը) չի տրամադրվում.

Պահանջվող տվյալները չտրամադրելու փաստն օպերատորները հիմնավորում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի հիմքով (հեռախոսահամարի և հեռախոսահամարի բաժանորդի տվյալների տրամադրումը կարող է իրականացվել միայն հեռախոսային խոսակցությունների վերահսկման միջոցով, հետևապես դատարանի որոշման հիման վրա («Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդված))

Հարկ է նշել, սակայն, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում խոսքը գնում է ***իրականացվող խոսակցությունները հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ գաղտնի վերահսկելու*** մասին. հետևաբար հեռախոսահամարի հիման վրա բաժանորդի տվյալները, ինչպես նաև բաժանորդի տվյալների հիման վրա հեռախոսահամարը պարզելը որևէ կերպ չի առնչվում «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ միջոցառման հետ

Նախագծով նախատեսվում է նաև փոփոխություն կատարել օրենքի 40-րդ հոդվածում, որի 3-րդ մասի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները քրեական վարույթն իրականացնող մարմիններին ներկայացնելու կարգը սահմանվում է օրենքով և օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավական ակտերով: Թե ինչ օրենք է նկատի ունեցել օրենսդիրը, որոշակի չէ: Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ փոխանցվող տվյալները ծառայելու են որպես քրեական գործ հարուցելու առիթ կամ հիմք, կամ օգտագործվելու են քննչական կամ դատական գործողությունների նախապատրաստման կամ կատարման համար, օգտագործվելու են քրեական գործով ապացուցման պրոցեսում, ակնհայտ է, որ փոխանցման հետ կապված հարաբերությունների հիմնական կարգավորումները, եթե նախատեսվեն, նախատեսվելու են միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով

Մյուս կողմից՝ կազմակերպաիրավական մի շարք հարցերի լուծումները կարելի է թողնել գերատեսչական իրավակարգավորման տիրույթում (օրինակ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների տվյալների գաղտնազերծումը, դրանք փոխանցելու ձևի հստակեցումը փոխանցվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ծավալը, նյութական կրիչներին առաջադրվող պահանջները և այլն)

Իրավահարաբերությունները միատեսակ կարգավորելու նկատառումներից ելնելով՝ նախագծով առաջարկվում է օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքները քրեական վարույթն իրականացնող մարմիններին փոխանցելու կարգը սահմանել օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ղեկավարների համատեղ հրամանով. Առաջարկությունը համապատասխանում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին, համաձայն որի Հայաստանի Հանրապետության նախարարները (Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մարմինների ղեկավարները) կարող են ընդունել համատեղ հրամաններ ***օրենքներով*** կամ օրենսդրական ակտերով ***ուղղակի նախատեսված դեպքերում:***

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախատեսվում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում նախատեսել օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող անձանց հեռախոսահամարներ կամ օպերատիվ հաշվառման գործերով պարզված հեռախոսահամարների բաժանորդների տվյալներն արտադատական կարգով ստանալու հնարավորություն

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»

Համաձայն ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք ***Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի*** բարեխղճորեն, ***օրենքով սահմանված նպատակով***, անձի համաձայնությամբ կամ ***առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:***

Առաջարկվող փոփոխությունն ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի պահանջին, քանի որ իրականացվում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված նպատակներով՝ օրենքի հիման վրա

Առաջարկվում է նաև օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքները քրեական վարույթն իրականացնող մարմիններին փոխանցելու կարգը սահմանել օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ղեկավարների համատեղ հրամանով.

3. <u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.</u>

Նախագիծը մշակվել է ՀՀ ոստիկանության Իրավաբանական վարչության կողմից

4. Ակնկալվող արդյունքը

Հանցագործությունների օպերատիվ հետախուզական բացահայտման արդյունավետության բարձրացում, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները քրեական վարույթն իրականացնող մարմիններին փոխանցելու միասնական կարգի սահմանում

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ